Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 24.11/[112123]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Շ. Կիրակոսյան	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ
Գ. Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Մարկոսյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ա. Ներսիսյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ
Ա. Վանյան	ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ
Վ. Մովսիսյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն
Հ. Թոքմաջյան	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտոր
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ

ՓՀԷԿ-ներ կառուցելու նպատակով ջրօգտագործման թույլտվություններ ստանալու հայտերի քննարկում

(Ա. Հարությունյան, Շ. Կիրակոսյան, Հ. Թոքմաջյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1 հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝

ա. ՓՀԷԿ-ներ կառուցելու նպատակով ջրօգտագործման թույլտվությունների հայտերն ստանալուց հետո տրամադրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ կարծիքի,

բ. ՓՀԷԿ-ներ կառուցելու նպատակով ջրօգտագործման թույլտվություններ ստանալու նպատակով կազմակերպությունների ներկայացրած (<<Մուսահա>> ՍՊԸ-ի կողմից՝ Ախուրյան գետի վրա, <<Արատես Էներջի>> ՍՊԸ-ի կողմից Կարակայա գետի Այսասի վտակի վրա, <<Սիրուն Կարինե>> ՍՊԸ-ի կողմից՝ Որոտան գետի վրա, <<Գնդասար ՀԷԿ>> ՍՊԸ-ի կողմից՝ Հրազդան գետի Ակունք վտակի վրա, <<Դեբեդ ՀԷԿ>> ՍՊԸ-ի կողմից՝ Փամբակ գետի վրա, <<Ջինջ Արփա>> ՍՊԸ-ի կողմից Արփա գետի վրա, <<Վարանցով ՀԷԿ>> ՍՊԸ-ի կողմից՝ Արփա գետի Մարտիրոս վտակի վրա, <<Ֆիրմա Արցախ>> ՍՊԸ-ի կողմից՝ Մարց գետի վրա, <<Ստեպձոր>> ՍՊԸ-ի կողմից՝ Տաշիր գետի վրա) հայտերը տրամադրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին կարծիքի և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Ջրի ազգային խորհրդի քննարկմանը.

2 ընդունել ի գիտություն, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ՓՀԷԿ-ի կառուցման լիցենզիայի մերժումը հիմք կհանդիսանա ՓՀԷԿ-ի կառուցման նպատակով տրված ջրօգտագործման թույլտվության դադարեցմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ